ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով

Շինարարական նյութերի //ներկերի/ ձեռքբերման

գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 28.08.2018-30.08.2018թ. ժամը 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/

Ս. Դավթյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Հ. Հարությունյանը

Ա. Գաբրիելյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝

Վ. Հակոբյանը

Ա. Գևորգյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 22,08,2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Էքստերիեր Գրուպ ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 27.07.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակից Էքստերիեր Գրուպ ՍՊԸ–ից eauction.armeps.am համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ Էքստերիեր Գրուպ ՍՊ ընկերության կողմից eauction.armeps.am համակարգով և էլեկտրոնային փոստով ներկայացվել են /կցվում են/:

2.2 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով Կարգի 46 կետով՝ նիստը կասեցվել է 2 աշխատանքային օրով, մասնակիցների կողմից ներկայացված ամբողջական նկարագիրը տրամադրվել է գնահատող հանձնաժողովի անդամներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

30.08.2018 ժամը 16.00

3.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ էքստերիեր Գրուպ ՍՊ ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.3 Ընտրված մասնակից ճանաչել 2 չափաբաժնով էքստերիեր Գրուպ ՍՊ ընկերությունը և գրությամբ առաջարկել կնքել պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Հ. Հարությունյան

Ա. Գաբրիելյան

Վ. Հակոբյան

Ա. Գևորգյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան